Ք Ա Ղ Վ Ա Ծ Ք

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի՝
2020 թվականի օգոստոսի 27-ի նիստի N 1 արձանագրությունից
(հեռավար կարգով)

ԼՍԵՑԻՆ.- ՀՀ ԿԳՄՍՆ գիտության կոմիտեի գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորմամբ իրականացված 18T-5B152 ծածկագրով **«Կիրառական նշանակության գիտահետազոտական մշակումների արտոնագրման և առևտրայնացման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում»** թեմայի (գիտական ղեկավար՝ տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Ատոմ Շավարշի Մարգարյան) 01.09.2018 - 31.08.2020 ժամանակահատվածն ընդգրկող ամփոփիչ հաշվետվության մասին հարցը:

Զեկուցող՝ գիտության գծով պրոռեկտոր, տնտեսագիտության դոկտոր, դոցենտ **Թ.Մ.Մկրտչյան:**

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.-

Պրոֆեսորներ Դ.Ռ.Գալոյանը, Վ.Ա.Սարգսյանը:

Զեկուցողը և արտահայտվողները նշեցին. հաշվետու ժամանակաշրջանում (01.09.2018 - 31.08.2020) հաստատված թեմայի շրջանակներում ուսումնասիրվել են հետյալ հարցերը. 1) Հայաստանի Հանրապետությունում ի՞նչ իրավաօրենսդրական միջավայրում և ինչպիսի՞ ինստիտուցիոնալ պայմաններում են ստեղծվում մտավոր սեփականության օբյեկտները, որքանո՞վ են դրանք մրցունակ կամ արտոնագրաունակ, 2) որքանո՞վ են մտավոր սեփականության օբյեկտների ստեղծողները շահագրգիռ ու մոտիվացված՝ ազգային կամ միջազգային համապատասխան գործակալություններում դրանց նկատմամբ իրավունքների գրանցման մեջ, 3) ինչպիսի՞ն է ՀՀ գիտահետազոտական կազմակերպությունների, տնտեսության մասնավոր հատվածի տեղական և օգտարերկրյա ընկերությունների շահագրգռվածությունը մտավոր սեփականության օբյեկտների նկատմամբ, հատկապես դրանց արտոնագրային պաշտպանության և փոխանցման իմաստով, 4) ինչպիսի՞ն է այդ ոլորտի նկատմամբ վարվող պետական քաղաքականությունը ու ի՞նչ քայլեր պետք է արվեն՝ իրավիճակը բարելավելու և որակապես շտկելու համար: Հետազոտության արդյունքում բացահայտված առավել էական խնդիրներն են՝ թույլ է շուկաների մրցակցային ճնշման ազդեցությունը նոր արտադրանքի և նոր տեխնոլոգիաների հարկադրական մշակման, առևտրայնացման հարցում, տնտեսության որոշակի հատվածը շարունակում է մնալ ստվերում կամ մենաշնորհային կարգավիճակում, ինչի հետևանքով օրինական հարկատուները հավելյալ ծախսեր կրելով՝ ի վիճակի չեն նորամուծություններ կատարել, մյուս կողմից՝ անօրինական դաշտում գործող տնտեսավարողների համար թուլանում են նորամուծություններ կատարելու խթանները, ձեռնարկությունների և գիտահետազոտական

հաստատությունների ոչ օպտիմալ չափերը, ոչ արդյունավետ սեփականատերերի շատ մեծ քանակի առկայությունը, արտաքին շուկաներում լարված մրցակցության պայմաններում աշխատելու անկարողությունը, նորարարական գործունեության հեռանկարային արդյունքների նկատմամբ տնտեսության իրական հատվածի կայուն պահանջարկի բացակայությունը, նորարարական ենթակառուցվածքի առանցքային կազմակերպությունների բացակայությունը, գիտական, կրթական, նորարարական կազմակերպությունների և արտադրական ձեռնարկությունների միջև կոոպերատիվ կապերի թուլությունը, տարածաշրջանային մակարդակում նորարարության համակարգի տարրերի համադրման բացակայությունը, ինչը խոչընդոտում է ֆինանսական, մտավոր և կազմակերպական ռեսուրսների ինտեգրմանը, նորարարության ոլորտում տեղեկատվության մատչելիության ցածր մակարդակը, փոքր եւ միջին նորարարական բիզնեսի անբավարար զարգացումը և խոշոր բիզնեսի հետ նրա համագործակցության ոչ պատշաճ մակարդակը, նորարարական գործունեության խթանման մեխանիզմների արդյունավետության ցածր մակարդակը և գիտատեխնիկական մշակումների շուկայական առաջխաղացման պետական աջակցության թուլությունը, նորարարական ուղղվածության փոքր և միջին ձեռնարկությունների ղեկավարների կառավարչական կարողությունների ցածր մակարդակը, նորարարական մենեջմենտի ժամանակակից գործիքների կիրառման բացակայությունը: Ուսումնասիրելով առաջատար երկրների և Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների արտոնագրերի վիճակագրական տվյալները, հետազոտական խումբը հանգել է այն եզրակացության, որ յուրաքանչյուր երկիր, համարելով մտավոր սեփականության ինստիտուտի կայացումը որպես նորարարական տնտեսության ձևավորման կարևոր գործոն, իրականացնում է համապատասխան միջոցառումներ, որպեսզի հասնի առավելագույն արդյունքի: Հայաստանի Հանրապետությունը, անդամակցելով բոլոր միջազգային համաձայնագրերին, տարեցտարի բարելավում է իր դիրքերը՝ կիրառելով միջազգային փորձը, մասնակցություն ունենալով փորձի փոխանակման տարբեր միջոցառումներին, բարեփոխումներ անում օրենսդրական ոլորտում: ՀՀ-ում մտավոր սեփականության պահպանության համակարգը պետք է շարունակի ծառայել որպես գյուտարարության և ինովացիոն գործունեության ակտիվացման խթան: Հետազոտական ոլորտի և տնտեսության միջև կապերն ամրապնդելու և զարգացնելու համար քաղաքականության համակարգումը պահանջվում է բազմաթիվ ոլորտներում, ներառյալ գիտությունը, նորարարություն, օտարերկրյա ուղղակի ներդրումները և արդյունաբերական զարգացումը: Հաջողության համար բոլոր ծրագրերում և բաց մրցույթներում կարևոր է թափանցիկությունը:

ՈՐՈՇԵՑԻՆ.- **Հավանություն տալ** ՀՀ ԿԳՄՍՆ գիտության կոմիտեի գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորմամբ իրականացված 18T-5B152 ծածկագրով **«Կիրառական նշանակության գիտահետազոտական մշակումների արտոնագրման և առևտրայնացման հիմնախնդիրները Հայաստանի**

Հանրապետությունում» թեմայի (գիտական ղեկավար՝ տնտեսագիտության թեկնածու, դոցենտ **Ատոմ Շավարշի Մարգարյան**) 01.09.2018 - 31.08.2020 ժամանակահատվածն ընդգրկող ամփոփիչ հաշվետվությանը և այն ներկայացնել ՀՀ ԿԳՄՍՆ գիտության կոմիտե (որոշումն ընդունվեց միաձայն, կողմ՝ 56, ձեռնպահ՝ 0, դեմ՝ 0):

Գիտական խորհրդի նախագահ՝ **Ա. Գրիգորյան**

Գիտական խորհրդի քարտուղար՝ **Ն. Դարբինյան**

2020 թ. օգոստոսի 27
Երևան